Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Նուր-Սուլթան (Ղազախստանի Հանրապետություն), 2019թ. հուլիսի 15-ից 18-ը

4. Հրավիրող կողմը

Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի 68-րդ հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

Նիստի ընթացքում քննարկվել են ՄԳՏԿ բյուջեն, ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ընթացքը, տարածաշրջանային գրասենյակների հաշվետվությունները, ՄԳՏԿ անդամակցության ռազմավարությունը և նոր ուղղությունները, գործունեության հետ կապված ընթացիկ հարցեր և այլն: Քննարկվել է նաև ՄԳՏԿ անդամ պետությունների համար համաշխարհային և

հատկապես տարածաշրջանային կարևորություն ունեցող ոլորտներում գիտական թեմաների իրականացման գերակայության հարցը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը մի շարք հանդիպումներ է ունեցել ՄԳՏԿ ղեկավարության և անդամ պետությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների առանցքային հարցերն էին՝

- ՄԳՏԿ շրջանակներում համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը՝ համաֆինանսավորման սկզբունքով,
- համատեղ ծրագրերի գիտական փորձաքննությանը և հայտերի ընտրությանը Հայաստանի Հանրապետության մասնակցության ձևաչափերը:

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նաև հանդես է եկել զեկույցով՝ անդրադառնալով մասնավորապես գիտության և տեխնոլոգիաների ոլորտում 2019-2020թթ. իրականացվելիք ծրագրերին, մասնավորապես ՀՀ գիտական կազմակերպությունների արդյունավետության գնահատման գործընթացը, բուհերի և գիտական կազմակերպությունների՝ ըստ արդյունավետության ֆինանսավորման մեխանիզմների ներդնումը, բուհերի և գիտահետազոտական կազմակերպությունների միջև գիտնականների ազատ տեղաշարժն ապահովող ցանցի ստեղծումը, գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում միջազգային համագործակցության ռազմավարության մշակումը, երիտասարդ գիտնականներին աջակցության ծրագրի և միջոցառումների ժամանակացույցը և այլն: ՀՀ գիտական կազմակերպությունների արդյունավետության գնահատման գործընթացը և ՀՀ գիտության կոմիտեի կողմից մշակված մեթոդաբանությունը մեծ հետաքրքրություն են առաջացրել մյուս պետությունների ներկայացուցիչների շրջանում: Ղազախստանի Հանրապետության

ներկայացուցիչը մասնավորապես հետաքրքրվել է ՀՀ գիտական կազմակերպությունների արդյունավետության գնահատման գործընթացի մանրամասներով՝ առաջարկելով կազմակերպել փորձի փոխանակում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ղազախստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի խնդրանքով՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել ղազախական կողմին տրամադրել ՀՀ գիտության կոմիտեի կողմից մշակված ՀՀ գիտական կազմակերպությունների արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը:

Հանդիպումների ընթացքում առաջարկվել է շարունակել համաֆինանսավորման սկզբունքով համատեղ ծրագրեր իրականացնելու հարցին նվիրված քննարկումները և հարցին անդրադառնալ աշնանը կայանալիք հաջորդ հանդիպմանը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի նախագահ Ռ. Լեհմանի առաջարկությամբ ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի 69-րդ հանդիպումը կանցկացվի 2019 թվականի նոյեմբերին՝ Երևանում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

23.07.2019թ.